

ՊԱՏՄԱ-ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻՄԻՏՐԻ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիրությունների թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԴԻՆԱՍՏԻԱ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Ուրարտական պետության պարբերացումն ունեցել է չորս գլխավոր փուլեր:

Առաջին փուլը սկսվել է ուրարտական պետության քաղաքական սապարեզ գալու արշալուսից, երբ այդ պետության գլուխ կանգնած էր նրա առաջին թագավոր Արամեն (859-832 թթ.)¹: Առաջին փուլի բնորոշ գիծն այն էր, որ նրա ընթացքում ուրարտական պետությունը սահմանափակված էր իր բուն տարածքի ու բնակչության շրջանակներում և ամեն կերպ ձգուում էր պաշտպանվել աստրական կործանարար արշավանքներից: Այդ փուլը տևում է մինչև ուրարտական պետության կողմից կազմակերպվող նվաճողական արշավանքները: Առաջին փուլում ուրարտական պետության տարածքը սկսվել է Արածանի գետի միջին ավագանի հարավային սահմաններից: Ճգվել Վանա լճի արևելյան երկարությամբ և տարածվել մինչև Ուրմիա լճի արևմտյան կողմերը:

Այդ փուլում ուրարտական պետության հիմնական բնակչություն են եղել Վանա լճից դեպի հարավ տարածված և Քաղիրը ու Զերմ գետերի միջև գտնվող Ուրուրատի ցեղամիության հետնորդները՝ ուրարտները և Արածանի գետի հյուսիսային կողմում տարածված Նաիրի ցեղամիության հետնորդները՝ արմենները կամ հայերը: Ժամանակի ընթացքում, սկսած մ.թ.ա. XIII դարից, աստրական պետության ճնշման տակ ուրարտները Քաղիրը և Զերմ գետերի միջև գտնվող տարածքից շարժվել են դեպի հյուսիս և հաստատվել Վանա լճի հարավ-արևելյան ափերին, իսկ Զահրիցիները, այսինքն՝ արմենները կամ հայերը, շարժվել են Արածանից դեպի հարավ և հաստատվել Վանա լճի և Արածանի միջև ձգվող տարածքում, ինչպես նաև Վանա լճի հյուսիսային և արևելյան կողմերում:

Մ.թ.ա. IX դարի սկզբին աստրական ճնշումը ստիպում է այդ ցեղերին համախմբվել ընդունված Աստրեատան: Այս ցեղերի համատեղ շամքերով, մասմակորապես Արանցից նահյան ցեղերի, այսինքն՝ արմենների կամ հայերի գլխավորությամբ ստեղծվում է պետություն, որի թագավոր է հոչակվում արմենական կամ հայկական ծագում ունեցող Արամեն: Նա, փաստորեն, հիմնադրում է հայկական դինաստիա սկսած մ.թ.ա. 859 թվականից: Աստրեատանցիներն իրենց երկրին սահմանակից Ուրուատի ցեղամիության անունով այդ պետությունն իրենց լեզվով գրած արձանագրություններում կոչում են Ուրարտու, իսկ իրենք՝ ուրարտական թագավորները, աստրեան լեզվով գրած արձանագրություններում այդ պետության հիմնադիր Զահրյան ցեղերի անունով կոչում են Նաիրի (միայն հետագայում Ոտոս I-ը (735-713 թթ.) իր աստրեան լեզվով գրած արձանագրությունում կոչում է Ուրարտու):

Առաջին փուլում ուրարտական պետությունը բաղկացած էր Վարչա-տարածքային չորս

միավորներից, որոնցից ամեն մեկը կազմված էր մի քաղաքից և հրա շոշակա բնակավայրերից: Դրանք էին՝ Արգաշըուն, Արամալին, Զանգիունան, Սուզունիան: Դրանցից առաջին երկուսը՝ Արգաշըուն և Արամալին, տարածված էին երկոր հյուսիսային մասում, որ ապրում էին նախրյան էթնիկական աշխարհին պատկանող արմենները կամ հայերը և, բնականաբար, վարչա-տարածքային այդ միավորներն ունեին հայկական բնակիչներ: Դա հաստատվում է հետևյալ փաստերով: Փաստերից առաջինն այն է, որ Արամալի վարչա-տարածքային միավորի հիմքում ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը: Դա թույլ է տալիս ասելու, որ Արամալի վարչա-տարածքային միավորի բնակիչները եղել են արմենները կամ հայերը (Դ. Ն. Սարգսյան, Ուրարտական պետության կազմավորման զյավոր փուլը, ՄՄՍԵԺ, հ. 23, Երևան, 2004, էջ 462): Արմեններով կամ հայերով է բնակեցված եղել նաև Արգաշըուն վարչա-տարածքային միավորը, քանի որ նրա անունը էլ ստուգաբանվում է հայերների լեզվաբիմքով (այն կազմված է հայերների «առնուլ» բայով, «զ» նախդիրով, «աչք» (հմնու. «աշք») արմատով (մեզագրերում «շ» տառ չի եղել, այն արտահայտվել է «շ» տառի տակ) և ամբողջ բառը նշանակում է «Աչքի զարնող» (Արգաշըուն եղել է նաև Արամեն թագավորի արքայական քաղաքը):

Ի տարբերություն դրանց, Ուրարտուի մյուս երկու վարչ-տարածքային միավորները՝ Զանգիունուն և Սուզունիան, գտնվում էին երկրի հարավային մասում, որ ապրում էին Ուրուատրի ցեղամիության հետնորդները՝ ուրարտները: Բնականաբար վարչա-տարածքային այդ միավորների բնակիչներն ունեցել են ուրարտական ծագում: Ուրարտական ծագում են ունեցել և վարչա-տարածքային այդ միավորների անունները:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ երկրի առաջին թագավոր Արամենի անվան հիմքում նույնական ընկած է օտարների կողմից հայ ժողովողին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, ինչպես որ էր Արամալի վարչա-տարածքային միավորի դեպքում, որը ցույց է տալիս ոչ միայն այն, որ Արամեն թագավորն ունեցել է հայկական ծագում, այլև այն, որ հայկական ծագում են ունեցել Արամենի ստեղծած արքայական դինաստիան, ինչպես նաև նրա զյանական պետությունը (Դ. Ն. Սարգսյան, Ուրարտական պետության հայկական ծագման հայտնաբերումը ըստ սեպագիր արձանագրությունների և բարձրաքանակների, Նորք, Երևան, 2003, № 3, էջ 174-187):

Արամենի մասից հետո, երբ դեռ շարունակում էր ուրարտական պետության պարբերացման առաջին փուլը, երկրի թագավոր է դառնում Սարդուրի I-ը (832-822 թթ.), որն ուներ ուրարտական ծագում և մ.թ.ա. 832 թվականից հիմնադրում է Արմենիայի կամ Հայաստանի ուրարտական արքայական դինաստիան²: Այս ենթադրությունը հաստատվում է հետևյալ փաստերով, որոնցից առաջինն վերաբերվում է Սարդուրի I-ի, նրա արքայական դինաստիայի ամեամների և նրա հոր Լութիարիի անունների ուրարտական ծագմամբ: Այսպես՝ Սարդուրի անունը կազմված է ուրարտական աստվածների պանթեոնի «Սարդի» դիցունու անունով, Սարդուրի I-ի հոր՝ Լութիարի անունը կազմված է ուրարտերների «լութու» (կին) և «էվրի» (տեր) արմատներով և ամբողջ բառը նշանակում է «Տերը կանանցի» (խոսքը արքայական կանանցի մասին է. երկի Լութիարին եղել է Արամենի արքայական

կանանցի տնօրենը, իսկ նրա որդին էլ, որ եղել է երկրի զորահրամանատարը, Արամեի մահից հետո, մ.թ.ա. 832 թ., Արածանիի ճակատամարտում աստրական զորքի մկանամաբ հանդես բերելով հզոր դիմակապություն, հոչակվել է երկրի թագավոր). Սարդուրի I-ի որդի Խշպուհնի անունը կազմված է ուրարտերենի «Խշպուհ» (Երշանիկ) արմատով և այլն: Փաստերից երկրորդ վերաբերում է ուրարտական սեպագիր արձանագրությունների լեզվին, որը տարբերվում է հայերենից և համապատասխանում է ուրարտերենին:

Թեև հայկական դինաստիան Արամեի մահից հետո (մ.թ.ա. 832 թ.) անկում է ապրում, բայց արմենները կամ հայերը տարածվում են այդ պետության մեջ: Արամալի վարչա-տարածքային միավորի հիմքի վրա ձևավորվում է ուրարտական պետության կենտրոնական ու արքունի Արմարիլի-Արմարիյալի կամ Արմիրալի մարզը, որի բնակչությունը եղել են արմենները կամ հայերը (Դ. Ն. Սարգսյան, Ուրարտական պետության կազմավորման գլոխավոր փոքրը, ՄՄԱԵԺ, հ. 23, Երևան, 2004, էջ 462): Այս ենթադրությունը հաստատվում է այն փաստով, որ այդ մարզի անվան հիմքում նույնական ընկած է օտարենի կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, ինչպես դա ասվեց Արամալի վարչա-տարածքային միավորի հետ կապված: Ուշագրավ է նաև այն փաստը, որ այդ մարզի քաղաքանունները ստուգաբանվում են հայերենի լեզվաբիմթղով: Օրինակ՝ Արբու քաղաքանվան հիմքում ընկած է հայերենի «արիի» (արև) արմատը, իսկ Արճի քաղաքանվան հիմքում հայերենի «առնա» (հաստատում, անընկեղի) արմատը և այլն:

Մեր կարծիքով՝ օտարենի կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունները ծագում են ուրարտական պետության կենտրոնական ու արքունի այդ Արմիրալի (Արմարիլի, Արմարիյալի) (հմմտ. Արամալի) մարզի անունից: Այսպես՝ այդ մարզին տրվող Արմիրալի (Արմարիլի, Արմարիյալի) անվան «րի»-ն կամ «րա»-ն ցեղ մատնանշող ածանց է, որն Արամալի քաղաքանվան համանատությամբ ավելացել է այդ ցեղային երկրի անվան մեջ և ընդգծում է, թե այդ երկրի կամ մարզի բնակիչներն «արմեններն» են: Իսկ Արմիրալի տեղանվան վերջուն դրվագ «զի» մասնիկն ուրարտերենի հոգմակի ուղղական հոլովի վերջավորությունն է, որը տեղանուններում կարող է փոխակել «նա» վերջավորությամբ: Օրինակ՝ Բիշամիլի երկրանունը հիշատակվում է նաև Բիայնա ձևով, Լուղուիմիլի երկրանունը՝ Լուղուինա ձևով: Հետևաբար Արմիրալի երկրանվան ցեղ մատնանշող «րի» կամ «րա» ածանցն անջատելուց և «զի» ածանցը «նա» ածանցով փոխարինելուց հետո ստացվում է «Արմինա» ձևը, որով կոչվել է Արմենիա երկիրը, երբ առաջին անգամ հիշատակվել է Բեհիստումյան արձանագրության մեջ՝ որպես Ուրարտու (Ուրաշտու) անվան համարժեքություն (այստեղ Արմինա անունը վերաբերում է ամրող Հայկական լեռնաշխարհին, որը կային բազմաթիվ ցեղեր, այլ ոչ թե մի ցեղին, թեև նրա հիմքում շարունակում է մնալ «արմեններ» ցեղի անունը):

Փաստուն ուրարտական պետության կենտրոնական ու արքունի Արմիրալի (Արմարիլի, Արմարիյալի) (հմմտ. Արամալի) մարզի հետ են կապված ոչ միայն արմենների ծագումը, այլև այդ ցեղի և նրա երկրի անունները: Այս փաստը հերքում է Արմեն-Ծովքիա տեսությունը, որ հորինել են որոշ տեսաբանները և դրել հայ ժողովրդի ակադեմիական պատմագրության հիմքում, ըստ որի արմենները ցեղի և նրա երկրի անունը ծագել են ուրարտական պետության բուն սահմաններից դուրս գտնվող խուրիսական ծագում ունեցող Ծով-

րիա և արամեական ծագում ունեցող Արմեն երկրներից, որոնցից Արմեն անկում է ապրել Ուրարտուի թագավոր Սարդուրի II-ի (764-735 թթ.) Ավանումից հետո ու այլս չի հիշատակվել քաղաքական ասպարեզում, իսկ Ծուբրիան էլ անկում է ապրել մ.թ.ա. 673 թ. Ասորեստանի թագավոր Ասարիանը (680-669 թթ.) Ավանումից հետո ու երկուսն էլ չեն հասել հայ ժողովրդի կազմավորման փուլին (մ.թ.ա VI դ.):

Ուրարտական պետության պարբերացման երկրորդ փուլը, ինչպես արդեն ընդգծվեց, սկսվել է այն ժամանակաշրջանից, երբ ուրարտական պետությունը կազմակերպել է Ավանողական արշավանքներ, որոնց շնորհիվ Ավանը է շուրջ 130 երկրներ, նրանցից ձեռք բերել մեծ քանակությամբ կողոպուտ, ուազմագերիներ, հարկ ու տուրք, բարձրացրել իր քաղաքական հեղինակությունը արտաքին աշխարհում ու Ասորեստանից իր ձեռքը վեցրել Առաջավոր Ասիայի առաջնությունը (Բեգեմոնիան): Երկրորդ փուլը համբնել է Ուրարտուի թագավորներ Իշպուհմիի (822-810 թթ.), Մենուայի (810-786 թթ.), Արգիշտի I-ի (786-764 թթ.) և Սարդուրի II-ի (764-735 թթ.) կառավարման ժամանակաշրջանի հետ³: Դա Ուրարտական պետության վերելքի փուլն էր:

Երրորդ փուլը սկսվել է մ.թ.ա. 735 թվականից, երբ ուրարտական պետությունը Սարդուրի II-ի կառավարման վերջում պարտություն է կրել Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ից (745-727 թթ.):⁴ Այդ պարտությունից հետո ուրարտական պետության քաղաքական հեղինակությունը ընկնում է արտաքին աշխարհում և Առաջավոր Ասիայի առաջնությունը (Բեգեմոնիան) Ուրարտուից անցնում է կրկին Ասորեստանին: Ուրարտական պետությունը բռնում է Վայուշը ուղի: Այդ գործընթացն ավելի է խորանում մ.թ.ա. 714 թվականից սկսած, երբ ուրարտական պետությունը իր թագավոր Ռուսա I-ի (735-713 թթ.) կառավարման վերջում պարտություն է կրում Ասորեստանի թագավոր Սարգոն II-ից (722-705 թթ.):⁵ Դրանից հետո ուրարտական պետության վայուշը դառնում է անկանելի:

Եթե որոշակի է ուրարտական պետության պարբերացման երրորդ փուլի սկիզբը, որն սկսվել է մ.թ.ա. 735 թվականից, երբ Ուրարտուն պարտություն է կրել Ասորեստանից, ապա անորոշ է, թե մինչև երբ է տևել այդ փուլը, քանի որ ուրարտական պետության վերջին թագավորներ Սարդուրի IV-ի, Էրիմենայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի կառավարման թվականներն անորոշ են: Հայտնի է միայն Սարդուրի IV-ի կառավարման սկիզբը, որը համընկնում է մ.թ.ա. 635 թվականի հետ, երբ ավարտվել է Սարդուրի III-ի (645-635 թթ.) կառավարումը: Բայց թե մինչև երբ է տևել Սարդուրի IV-ի կառավարումը, անորոշ է:

Ուրարտուի թագավորների ժամանակագրությունները որոշվում են աստրական թագավորների տեղեկությունների, նրանց ժամանակագրությունների օգնությամբ: Սակայն Սարդուրի IV-ի թագավորության ավարտի, ինչպես նաև Սարդուրի IV-ին հաջորդող ուրարտական էրիմենա, Ռուսա III և Ռուսա IV թագավորների մասին ասաւրական աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ասուրական պետությունն իր ուշադրությունը շեղել էր Ուրարտուից և գրադարձ էր կիմերակայութական ցեղերով և Առաջավոր Ասիայում հանուն առաջնության (Բեգեմոնիայի) պայքարի ելած Մեղիս ու Նոր-Բարեղոնյան պետություններով: Փաստորեն Սարդուրի IV-ի,

³ ՍԿՀ, №№ 4-263 (допол. 14-442).

⁴ АВИИУ, №№ 41-45.

⁵ АВИИУ, №№ 46-55.

Երիխնեայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի կառավարման թվականները համընկել են աստուրական պետության անկման փուլի և անմիջապես նրան նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանների մետ:

Հայկական լեռնաշխարհի այս ժամանակաշրջանի թագավորների ժամանակագրության մասին տեղեկություններ են պահպանել ավանդությունները, որոնք տեղ են գտել Հերոդոտոսի «Պատմություն ինը զրքից» աշխատությունում, Քսենոփոնի «Կյուրությալիամ» և Խորենացու «Հայոց պատմությունում»: Այդ կապակցությամբ զգալի դեր ունեն պարսկական թագավորների սեպազիր արձանագրությունները և մեղիական ու պարսկական թագավորների ժամանակագրությունները: Այդ հարցում ինչ-որ չափով օգտակար են նաև բարեկոնական սեպազիր ժամանակագրությունների, ինչպես նաև Աստվածաշնչի տեղեկությունները:

Հստ Բաբելոնական սեպազիր ժամանակագրությունների, Աստվածաշնչի, ինչպես նաև պարսկական թագավորների սեպազիր արձանագրությունների և Հերոդոտոսին, Խորենացուն ու Քսենոփոնին հասած պահպանագրությունների տվյալների, աստուրական պետության անկման փուլում (Մ.թ.ա. 612-609 թթ.) և նրան անմիջապես նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել միայն մի պետություն, որին ենթարկվել են այդ լեռնաշխարհի մյուս բոլոր երկրներն ու ցեղամիտությունները:

Բաբելոնական սեպազիր ժամանակագրությունները, որոնք գրվել են սեմական ծագում ունեցող բարեկերեն լեզվով, այդ պետությունը համարում են Ուրարտու (^{KUR}Uraštu)⁶, որը համապատասխանում է սեմական ծագում ունեցող աստուրերեն լեզվով գրված սեպազիր արձանագրությունների Ուրարտու (^{KUR}Uraštu) պետությանը (Դ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատ երկրիրը» ըստ սեպազիր արձանագրությունների և ժողովրդական պահպանագրությունների, ՊԲՀ, 2003, N 4, էջ 254-260): Հստ բաբելոնական ժամանակագրությունների, այդ պետությունը մնում է Բաբելոնի թագավոր Նարուապալուտորի կամ Նարուապալասարի և Մեղիայի թագավոր Ումարիշտարի (Հերոդոտոսի մոտ՝ Կիաքսար (625-585 թթ.), Խորենացու մոտ՝ Վարքակես) նվաճումների սահմաններից դուրս, այսինքն՝ այն շարունակում է կանգուն մնալ աստուրական պետության կործանվելուց հետո:

Խորենացու⁷ հասած պահպանագրությունները, որոնք գրվել են հայելվորապական ծագում ունեցող հայերեն լեզվով, այդ պետությունն անվանում են Արմենիա անունով: Այդ պահպանագրությունները նաև տեղեկացնում են, որ Վարքակեսը (Ումարիշտար-Կիաքսար) Արմենիայի այդ ժամանակավա թագավոր Պարուին, որն օգնել էր իրեն աստուրական պետության տապալման գրծում (Մ.թ.ա. 612-609 թթ.), թագ է ուղարկում, այսինքն՝ ճանաչում է նրա թագավորությունը:

Աստվածաշնչը⁸, որը գրվել է սեմական ծագում ունեցող երրայերեն լեզվով, տեղեկություն է պահպանել այն մասին, որ 'RRT կամ Ararat կոչվող թագավորությունը, որը համապատասխանում էր աստուրական սեպազիր արձանագրությունների Ուրարտու (Uaratu) և բաբելոնական սեպազիր արձանագրությունների Ուրաշտու (Uraštu) պետությանը, այդ

⁶ C. J. Gadd, The fall of Nineveh, London, 1923, p. 36, lin. 72; АВИИУ, N 82.

⁷ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I (ԺԹ, ԺԶ, ԺԴ, ԽԱ, ԽԲ):

⁸ Աստվածաշնչ, Գիրը Ծի և Նոր Կոփակարանաց, Վիննեա, 1957; Библия (Книга ветхого и нового завета), Вена, 1957, LI, 27; АВИИУ, N 83.

ժամանակ գոյություն ուներ և իր զորքով օգնել է Պարսկաստանի թագավոր Կյուրոս Մեծին (550-529 թթ.) մ.թ.ա. 539 թվականին Բաբելոնի վրա արշավելիս (Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 282-283): Խորենացուն⁹ հասած ավանդությունները, որոնք, ինչպես ասվեց, զրվել են հնդկովուական ծագում ունեցող հայերեն լեզվով, 'RRT-Ararat-Urartu-Uraštu' թագավորությունը համարում են Արմենիայի (Armenia) թագավորություն (Դ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատ երկիր» ըստ սեպագիր արձանագրությունների և ժողովրդական ավանդությունների, ՊԲՀ, 2003, N 4, էջ 254-260):

Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ը (522-485) իր Բենիստումյան եռալեզու սեպագիր արձանագրությամ¹⁰ բարեկերեն տարբերակում հիշատակում է իր դեմ ապստամբած Ուրաշտու (ասսուրերեն՝ Ուրարտու) երկրի և Արա բնակիչների՝ ուրաշտների (ասսուրերեն՝ Ուրարտներ) մասին, որոնց հնազանդեցնելու համար իրաք հաջորդող հինգ արշավանքներ է կազմակերպում Արանց վրա իր զորավարներ Դադարշիշի և Վահումիսայի գլխավորությամբ, հինգ արյունահին ճակատամարտեր է տալիս այդ երկրի Զուգա ավանում, Տիգրա, Ուրիամա բերդերում, ասսուրական իզալա մարզում և վերջում Ուրաշտուի կամ Ուրարտուի Առուղիարա գավառում: Այդ բոլորից հետո նոր Ուրաշտու կամ Ուրարտու երկիրը ենթարկում իրեն: Դարեհ I-ի այդ նոյն արձանագրության պարսկերեն տարբերակում Ուրաշտու կամ Ուրարտու երկրի և ուրաշտացիներ կամ ուրարտացիներ բնակիչների փոխարեն հիշատակում են Արմինա (հունարեն՝ Արմենիա) երկիրը և արմիներ (հունարեն՝ արմեններ) բնակիչները, որոնք ապստամբել են Դարեհ I-ի դեմ և տվել հինգ արյունահին ճակատամարտեր: Այս փաստը ցուց է տալիս, որ սեմական ծագում ունեցող բարեկերեն լեզվով երկիրը կոչվել է Ուրաշտու կամ Ուրարտու, Արա բնակիչները՝ ուրաշտացիներ կամ ուրարտացիներ, իսկ հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով երկիրը կոչվել է Արմինա կամ Արմենիա, Արա բնակիչները՝ արմիներ կամ արմեններ անուններով:

Հոյն պատմիչ Հերոդոտոսն¹¹ իր «Պատմություն ինը գրքից» երկում, որը զրվել է հնդեվլուական ծագում ունեցող հունարեն լեզվով, տեղեկություն է պահպանել այն մասին, որ Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ը (522-485 թթ.) իր թագավորության սկզբին, այսինքն՝ մ.թ.ա. 522 թ., Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող բոլոր երկրների թագավորությունները վերացրել են, այդ երկրները դարձել պարսկական սատրապություններ, որոնց վրա իրենց թագավորների փոխարեն որպես կառավարիչներ է նշանակել պարսկական սատրապներին: Ըստ որում, Դարեհ I-ը Արմենիայի վրա որպես սատրապ է նշանակել իր փեսա Արտորիմեսին:

Հնդեվլուական ծագում ունեցող հունարեն լեզվով գրված Հերոդոտոսի պատմության սույն հատվածի Արմենիա երկրանունը պետք է ընկալել նաև որպես սեմական լեզուներով պահանդիված Ուրաշտու կամ Ուրարտու երկրանուն այնպես, ինչպես Դարեհ I-ի Բենիստումյան եռալեզու սեպագիր արձանագրության հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով տարբերակի Արմինա կամ Արմենիա երկրանունն է ընկալվել որպես սեմական ծագում ունեցող բարեկերեն լեզվով ավանդված տարբերակի Ուրաշտու կամ Ուրար-

⁹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I (ԻԲ):

¹⁰ F. H. Weissbach, Die Keilinschriften der Achameniden, S. 8-75.

¹¹ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, III, § 89, VII, § 7:

տու երկրանուն: Այդպես պեսք է ըմպալել օսակ Քսենոփոնի հնագույղոպական ծագում ունեցող ժումարեն լեզվով և խորենացու հնագույղոպական ծագում ունեցող հայերեն լեզվով աշխատությունների Արմենիա երկրանունը: Այդ են հաստատում խորենացուն հագումած աշխատությունների հաղորդած տեղեկությունները՝ կապված Ուրարտուի առաջին թագավոր Արամեի կամ Արամի հետ, որին այդ ավանդությունները համարում են Արմենիայի թագավոր՝ արմատական կապ տեսնելով Արամեի կամ Արամի անվան և Արմենիա երկրանվան միջև:

Հերոդոտոսի պատմության վերոհիշյալ հատվածից հասկանալի է, որ Դարեն I-ի թագավորության սկզբին, ալպինը՝ մ.թ.ա. 522 թ. Ուրարտու-Արմենիա երկիրն ապստամբել է Պարսկաստանի դեմ այն պատճառով, որ Դարեն I-ը Ուրարտու-Արմենիային զրկել է սեփական թագավորությունից, այդ երկիրը վերածել պարսկական սատրապության, որի վրա սեփական թագավորի փոխարեն որպես կառավարիչ է հշանակել պարսկական սատրապ Արտոքրմենան: Անշուշտ սա է այն արմատական պատճառը, որ Ուրարտու-Արմենիան, ինչպես ընդգծեց վերևում, կենաց ու մահու պայքարի է դուրս եկել Պարսկաստանի դեմ, մինչ արյունահեղ ճակատամարտեր է տվել, որոնք տեղի են ունեցել երկու փուլով: Առաջին փուլում տեղի են ունեցել երեք ճակատամարտեր, երր պարսկական զորքի գրուս կանգնած էր ուրարտու-արմենական ծագում ունեցող զորահրամանատար Դադարշիշը, իսկ երկրորդ փուլում տեղի են ունենում երկու ճակատամարտեր, երր պարսկական զորքի գրուս կանգնած էր պարսկական ծագում ունեցող Վահումիսան: Առաջին փուլի երեք ճակատամարտերն էլ տեղի են ունենում Ուրարտու-Արմենիա երկրի մերսում, իսկ երկրորդ փուլի երկու ճակատամարտերից առաջինը տեղի է ունենում ասատրական հզալա ամրոցում, երկրորդը նոր միայն Ուրարտու-Արմենիա երկրի մերսում: Առաջին փուլում Ուրարտու-Արմենիայի զորքը հայտնամակի է հասնում: Այս ենթադրությունը հաստատվում է երկու փաստով: Առաջինն այն է, որ Դարեն I-ը ստիպված նոր զորք է ուղարկում Ուրարտու-Արմենիա երկրի վրա նոր զորահրամանատար Վահումիսայի զիսավորությամբ: Երկրորդ փաստն այն է, որ Վահումիսան իր առաջին ճակատամարտը տալիս է ոչ թե Ուրարտու-Արմենիա երկրի մերսում, այլ նոր սահմաններից դուրս՝ ասատրական հզալա մարզում: Դա հշանակում է, որ առաջին փուլում իրոք Ուրարտու-Արմենիայի զորքը հատվել է պարսկական զորքին, դուրս քշել երկրի սահմաններից, ամրացել ասատրական հզալա մարզում և այնտեղ էլ նախապատրաստվել դիմակալելու պարսկական նոր արշավագրին, իսկ վերջինիս զորահրամանատար Վահումիսան էլ հենց այնտեղ է տալիս իր առաջին ճակատամարտը: Առաջին ճակատամարտում Վահումիսան հավանաբար ձեռք է բերում առավելություն, ապա մոլնում է Ուրարտու-Արմենիա երկրի սահմաններից մերս, տալիս իր երկրորդ ճակատամարտն այդ երկրի Առտիշյարա զավառում և ամեն ինչ ավարտում իր օգտին: Ուրարտու-Արմենիան վերածվում է պարսկական սատրապության գլուխով իր սեփական արքայական զամբից, իր պետությունից:

Սխալվել են հետազոտողներ Լեմման-Հաուպտը¹² և Գ. Ա. Մելիքիշվիլիի¹³, որոնցից առաջինի կարծիքով ուրարտական պետությունն ամկում է ապրել մ.թ.ա. 585 թվականին, իսկ երկրորդի կարծիքով՝ մ.թ.ա. 590 թվականին: Հաշվի առնելով, որ մին արևելքի առա-

¹² C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, II (2), S. 81.

¹³ Գ. Ա. Մելիքիշվիլի, Հայութ-Ուրարտ, стр. 320.

շին հզոր պետությունը, այն է՝ Աստրեատանը, պայքարել է իր պետության անկման դեմ շուրջ չորս տարի՝ մ.թ.ա. 612-609 թվականներին, ուստի Ուրարտուն էլ, որպես հին արևելյան երկրորդ հզոր պետություն, պիտի հայտնի պայքար մղեր իր պետության անկման դեմ։ Սակայն պատմությունը մ.թ.ա. 590 և մ.թ.ա. 585 թվականներին չի արձանագրում նման պայքարի մասին որևէ փաստ։ Պատմությունը նման պայքարի մասին է արձանագրում մ.թ.ա. 522 թվականին, եթե նման պայքար է մղում Ուրարտու-Արմենիան Պարսկաստանի դեմ համուն իր պետության։

Ուստի կարելի է եզրակացնել, որ Ուրարտական պետությունն իր գոյությունը պահպանել է մինչև մ.թ.ա. 522 թվականը։ Դրանով պարզվում է նաև այն, որ Ուրարտուի վերջին թագավոր Ռուսա IV-ը կառավարել է մինչև մ.թ.ա. 522 թվականը։

Եթե մինչև հիմա հայտնի էր Ուրարտուի վերջին թագավորներից Սարդուրի IV-ի կառավարման սկիզբը, որը համապատասխանում էր մ.թ.ա. 635 թվականին, այժմ պարզ դարձավ այդ թագավորներից Ռուսա IV-ի կառավարման վերջը, որը, ինչպես ընդգծվեց վերևում, համապատասխանում է մ.թ.ա. 522 թվականին։ Փաստորեն Ուրարտու-Արմենիայի թագավորներ Սարդուրի IV-ի, Էրիմենայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի կառավարումը տևել է մ.թ.ա. 635 թվականից մինչև մ.թ.ա. 522 թվականը։ Հիշյալ ժամանակաշրջանում Խորենացուն և Քևենուինին հասած ավանդությունները հիշատակում են նոյն երկրի, նոյն պետության թագավորներին, բայց ուրիշ անուններով։

Հատ Խորենացուն¹⁴ հասած ավանդությունների, Մեղիայի թագավոր Վարբակեսի (բարելոնական սեպագիր ժամանակագրություններում՝ Ումաքիշար, Հերոդոտոսի պատմությունում՝ Կիաքսար) (625-585 թթ.) օրոք, եթե կործանվում է ասսուրական պետությունը մ.թ.ա. 612-609 թվականներին, «մեր երկրի», այսինքն՝ Ուրարտու-Արմենիայի թագավորն էր Պարույր Ակայորդին։

Հատ Հերոդոտոսին¹⁵ հասած ավանդությունների, Մեղիայի ու Լյուտիայի (Լիուտիայի) միջև մղվող քառամյա պատերազմից հետո մ.թ.ա. 585 թ. կճքված պայմանագրով Հալիս գետից դեպի արևմուտք ձգվող երկրներն անցնում են Լյուտիայի գերիշխանության տակ, իսկ նոյն գետից արևելք ձգվող երկրները՝ Մեղիայի գերիշխանության տակ, որի մեջ է մտնել, բնականաբար, նաև Ուրարտու-Արմենիա պետությունը։ Ուրարտու-Արմենիան, անցնելով Մեղիայի գերիշխանության տակ, դառնում է նրան հարկատու երկիր։ Այդ ժամանակից սկսվում է Ուրարտու-Արմենիա պետության անկման փուլը, որը տևում է մինչև Շարեն I-ի թագավորության սկիզբը, այսինքն՝ մինչև մ.թ.ա. 522 թվականը, եթե Ուրարտու-Արմենիան գրկվում է իր պետությունից և վերածվում պարսկական սատրապության։

Խորենացուն¹⁶ հասած ավանդություններից կարելի է ենթադրել, որ Մեղիայի գամին Վարբակես-Ումաքիշարին (Հերոդոտոսի մոտ՝ Կիաքսար) հաջորդող Աժդահակ-Աստիագեսի (585-550 թթ.) թագավորության ժամանակ Ուրարտու-Արմենիայում թագավորում էր Տիգրանը, որի քոյք Տիգրանուին ամուսնացել էր Աժդահակ-Աստիագեսի հետ։ Տիգրանը քրոջից իմանում է, որ Աժդահակ-Աստիագեսը դավեր է լարում, որ իրեն սպանի,

¹⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I (ԻԱ, ԻԲ)։

¹⁵ Հերոդոտոս, Պատմություն ինը գորից, I, § 72։

¹⁶ Խորենացի, Հայոց պատմություն, I (ԻԳ-ԼՀ)։

բայց ինքը Բախսահարձակ է լինում և սպանում նրան: Քսենոփոնի¹⁷ հասած ավանդություններից հասկացվում է, որ Տիգրանը եղել է Արմենի (Խորենացուն հասած ավանդություններից երրորդի) հայրը, որը ունեցել է շատ զանազան:

Հայտ Քսենոփոնի¹⁸ հասած ավանդությունների, Արմեն-Երվանդը Ուրարտու-Արմենիա երկրու թագավորել է Պարսկաստանի թագավոր Կյուրոս Մեծի (550-529 թթ.) ժամանակ: Հայտ Քսենոփոնի¹⁹ հասած ավանդությունների, Երվանդի որդի Տիգրանը եղել է Կյուրոս Մեծի որսընկերը: Քսենոփոնի²⁰ հասած ավանդությունները վկայում են, որ Կյուրոս Մեծի ժամանակ Տիգրանը եղել է Ուրարտու-Արմենիայի գորաբրամանատարը:

Հայտ Խորենացուն²¹ հասած ավանդությունների, Տիգրանը թագավորել է Ուրարտու-Արմենիայի վրա Դարեն I-ից (522-485 թթ.) առաջ և Կյուրոս Մեծից հետո, այսինքն՝ 529-522 թվականներին: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Պարսկաստանում թագավորում էր Կամբյասեսը (529-522): Խորենացուն հասած ավանդությունները հաղորդում են, որ Երվանդ-Արմենի որդի Տիգրանից հետո Ուրարտու-Արմենիայում այլևս թագավորներ չեն եղել, Տիգրանը եղել է այդ պետության վերջին թագավորը²²:

Ակներն են, որ, ըստ ավանդությունների տվյալների, Ուրարտու-Արմենիայի արքա Տիգրանի թագավորությունը հասել է մինչև մ.թ.ա. 522 թվականը, երբ այդ երկիրը Դարեն I-ի իշխանության սկզբին գրկվում է իր գամից, վերածվում պարսկական սատրապության, որի վրա, ինչպես ընդգծվեց վերևում, ըստ Հերոդոտոսին հասած ավանդությունների, թագավորի փոխարեն կառավարիչ է Աշանակվում պարսկական սատրապ Արտօքմեսը: Վերևում էլ իմացանք, որ, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների (խորը Դարեն I-ի սեպագիր արձանագրությունների մասին է), Հայկական լուսաշխարհում գտնվող Ուրարտու-Արմենիա պետության վերջին թագավորի (այստեղ պետք է նկատի ունենալ Ռուսա IV-ին) իշխանությունը նույնականացնելու մասին է մինչև մ.թ.ա. 522 թվականը: Փաստորեն Ուրարտու-Արմենիա պետության ամենամասն ժամանակի հետ կապված սեպագիր արձանագրությունների փաստերն ամբողջովին համընկնում են:

Գրեթե համընկնում են նաև սեպագիր արձանագրություններում հիշատակված մեզ հետաքրքրող թագավորներից առաջին՝ Սարդուրի IV-ի և ավանդություններում հիշատակված մեզ հետաքրքրող թագավորներից առաջին՝ Պարուրի քաղաքական սապարեազ զալու ժամանակաշրջանը: Ինարկե, որոշ տարրերություն կա: Դրա պատճառն այն է, որ Պարուրի թագավորության սկզբն ավանդական է և պայմանական, իսկ Սարդուրի IV-ին ավանդված է սեպագիր արձանագրություններով և ավելի հավասար է:

Փաստորեն սեպագիր արձանագրություններում հիշատակված Սարդուրի IV-ը, Էրիմենամա, Ռուսա III-ը, Ռուսա IV-ը և ավանդություններում հիշատակված Պարուրը, «Երվանդ-Արմենի հայր Տիգրանը», «Երվանդ-Արմենը», «Երվանդ-Արմենի որդի Տիգրանը» թագավորել են միևնույն տարածքում, միևնույն ժամանակաշրջանում և միևնույն պետությունում:

¹⁷ Քսենոփոն. Կյուրոպակիա, III, §§ 1-2:

¹⁸ Նոյյեր:

¹⁹ Նոյյեր:

²⁰ Նոյյեր:

²¹ Մովսես Խորենացի. Դայոց պատմություն, I (ԴԲ):

²² Նոյյեր:

յունում: Միամույն տարածքում, միամույն ժամանակաշրջամուս և միամույն պետությունում թագավորելու հանգամանքը թուղ է տալիս սեպազիր արձանագրություններում հիշատակված Սարդուրի IV, Էրիմենա, Ռուսա III, Ռուսա IV թագավորներին համապատասխանաբար համարել ավանդություններում հիշատակված Պարույր, «Երվանդ-Արմենի հայր Տիգրան», «Երվանդ-Արմեն», «Երվանդ-Արմենի որդի Տիգրան» թագավորներին (Դ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատի թագավորություն» ըստ սեպազիր արձանագրությունների, Նոր-Դար, 2003, N 4, էջ 258-259): Այստեղ տարբերությունը նրանց անունների մեջ է: Իսկ այդ տարբերությունը բխում է նրանցից, որ դրանցից առաջինները հիշատակվել են սեպազիր արձանագրություններում:²³, իսկ երկրորդը՝ ավանդություններում:

Իհարկե, զարմանք չպետք է հարուցի տարբեր անուններ կրող թագավորների այդպիսի համարդությունը, քանի որ փաստեր կան, որ Ուրարտու-Արմենիայի ուրիշ թագավորներ էլ կրել են կրկնակի անուններ: Այսպես, օրինակ՝ Ռուսա I թագավորը կրել է նաև Ունդիարի (¹Uendipri)²⁴ անունը, իսկ Ռուսա II-ը՝ Յայա (¹Ja-ia-a)²⁴ անունը:

Ինչպես վերևում ապէց, Խորենացուն և Քենափոնին հասած ավանդությունները վկալում են, որ Պարույր թագավորել է Վարրակես-Ումաքիշար-Կիաքարի ժամանակ, այսինքն՝ 625-585 թթ., «Երվանդ-Արմենի հայր Տիգրանը» Աժդահակ-Աստիհագեսի ժամանակ, այսինքն՝ 585-550 թթ., «Երվանդ-Արմենը» Կյուրոս Մ'եծի ժամանակ, այսինքն՝ 550-529 թթ., «Երվանդ-Արմենի որդի Տիգրանը» Կամբյուսի ժամանակ, այսինքն՝ 529-522 թթ.: Այդ առվա ժամանակագրությունները կարելի է վերագրել նաև սեպազիր արձանագրություններում հիշատակված Ուրարտու-Արմենիայի թագավորներ Սարդուրի IV-ին, Էրիմենային, Ռուսա III-ին, Ռուսա IV-ին՝ միայն այն տարբերությամբ, որ Սարդուրի IV-ի թագավորությունը ըստ սեպազիր արձանագրությունների տվյալների, սկսվել է մ.թ.ա. 635 թվականից (անշուշտ այդ առվա ժամանակաշրջանից է թագավորել նաև Պարույրը, քանի որ Սարդուրի IV-ի թագավորության սկիզբը, ինչպես ընդգծվեց վերևում, հիշատակված է սեպազիրերով և ուսա՞մ է, իսկ Պարույրինը՝ ալանդական է ու պայմանական): Ուստի կարելի է ասել, որ Սարդուրի IV-ը թագավորել է 635-585 թթ., Էրիմենան՝ 585-550 թթ., Ռուսա III-ը՝ 550-529 թթ., Ռուսա IV-ը՝ 529-522 թթ.²⁵ (Դ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատի թագավորություն» ըստ սեպազիր արձանագրությունների, Նոր-Դար, 2003, N 4, էջ 259):

Մատնանշված փաստերը ցուց են տալիս, որ Ուրարտական պետության պարբերացման 3-րդ փուլը տևել է մինչև մ.թ.ա. 585 թվականը, որին հաջորդել է ուրարտական պետության պարբերացման այն փուլը, երբ Ուրարտուն կորցնում է իր անկախությունը և անցնում Մ'եղիայի գերիշխանության տակ, դառնում նրան հարկատու երկիր: Ուրարտական պետության պարբերացման երրորդ փուլը համընկնում է Ուրարտուի թագավորներ Ռուսա I-ի (735-713 թթ.), Արգիշթի II-ի (713-685 թթ.), Ռուսա II-ի (685-645 թթ.), Սարդուրի III-ի (645-635 թթ.), Սարդուրի IV-Պարույրի (635-585 թթ.) կառավարման ժամանակաշրջանի ժամանակ: Այս փուլն ուրարտական պետության վայրէջքի փուլն էր:

Թեև այս փուլի ուրարտական որոշ թագավորներ փորձում էին նվաճողական արշա-

²³ ՍԿՀ, N 267, ստ. 5.

²⁴ J. Knudtzon, Assyrische Gebete and den Sonnengott, Leipzig, 1893, I, &48; ԱԲԻԱ, N 68 (ա).

²⁵ Դ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատի թագավորություն» ըստ սեպազիր արձանագրությունների (Նոր-Դար, Երևան, 2003, N 4), էջ 257-260:

վաճքներ կազմակերպել և բարձրացնել իրենց պետության քաղաքական հեղինակությունն արտաքին աշխարհում (օրինակ՝ Ռուսա 1-ը, Արգիշտի 2-ը, Ռուսա 2-ը), բայց իզոր, ժամանակն իր վճիռը կայացրել էր, և Ուրարտուի վայրէջքը անդառնալի էր:

Ուրարտական պետության պարբերացման 4-րդ փուլ սկսվում է, ինչպես ընդգծվեց վերևում, Մեղիսի ու Լյուդիայի (Լիդիայի) միջև մ.թ.ա. 585 թվականին կըքված պայմանագրի ժամանակաշրջանից, երբ Ուրարտու-Արմենիան անցնում է Մեղիսի գերիշխանության տակ՝ կորցնում իր քաղաքական անկախությունը, դառնում Մեղիսին հարկատու երկիր, թուլանում, բռնում անկման ճանապարհ: Թեև Կյուրոս Մեծի ժամանակ Երվանդ Արմենը և Դարեն I-ի ժամանակ ժողովորդը պայքարի են ելնում անկախության համար, բայց նրանց չի հաջողվում վերանվաճել անկախությունը:

Չորրորդ փուլը համընկնում է Ուրարտու-Արմենիայի թագավորներ Էրիմենա-«Երվանդ Արմենի հայր Տիգրան» (585-550 թթ.), Ռուսա III-«Երվանդ-Արմեն» (550-529 թթ.) և Ռուսա IV-«Երվանդ-Արմենի որդի Տիգրան» (529-522 թթ.) կառավարման ժամանակաշրջանի ժամանության ժամանակամասում:

Ուրարտու-Արմենիան պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորների կամ այդ պետության վերջին երեք թագավորների՝ Էրիմենայի (585-550 թթ.), նրա որդի Ռուսա III-ի (550-529 թթ.) և վերջինիս որդի Ռուսա IV-ի (529-522 թթ.) թագավորության սկզբից, այսինքն՝ մ.թ.ա. 585 թվականից, երբ ավարտվում է Մեղիսի միջև մղվող քառամյա պատերազմն ու կըքվում հաշտության պայմանագիրը, որով Հալիս գետից դեպի արևմտուք գտնվող Երկրներն անցնում են Լիդիայի գերիշխանության տակ, իսկ այդ գետից դեպի արևելք գտնվող Երկրները, որոնց թվում նաև Ուրարտու-Արմենիան, անցնում են Մեղիսի գերիշխանության տակ, դառնում նրա հարկատուները, փոխվում է Ուրարտու-Արմենիայի արքայական դինաստիան:

Այս ենթադրությունն ամենից առաջ հաստատվում է այն կարևոր փաստով, որ Ուրարտու-Արմենիայի արքաների ցուցակում Էրիմենան հիշատակվում է Սարդուրի IV-ից հետո, այսինքն՝ Էրիմենայի հայրը պետք է լիներ Սարդուրի IV-ը, բայց Էրիմենայի սեպազիր արձանագրությունում, ուր աղարտված է նրա հայրանվան վերջին մասը և պահպանված է միայն նրա առաջին մասը, այդ հայրանունը սկսվում է ոչ թե «Սար» վանկով, այլ «Ար» կամ «Ռու» վանկով.

«Երեսի կողմ» - 1) LUGAL-še a-li ti-i-e 2)^DHal-di-ERUM-di ^L^UKUG^{MES} 3)^IA-lu-a-ni-ni ^L^UMU^{MES} 4) za-ni-da-bi TI DINGIR 5)^{SAL}si-la-a 6)^IMu-i-da-a-i ^L^UMU 7) MIN-e ma-nu-ú-bi 8) E.GAL-ni hi-ni-e 9) LUGAL- še bi-du-ú-ni 10)^IA-lu-a-ni-gi ^L^UMU 11) mi-i a-lu-šá-i-ni.... (հակառակ կողմ).- 1) bi-di a-r-i-e-e 2) a-li-ú-ni

(Կանք)

^IE-ri-me-na-ni ^IA[r...](կամ ^IR[u...])²⁶

«Երեսի կողմ» - Արա ինչ է (ասում) թագավոր՝ ասա Խալոհրուրապին՝ «փողի մարդուն», Ալուսանի «հացթուխի» («խորարարի») մասին. սիրելի լինի քո կյանքը աստծու խկությամբ: Մի աղջիկ, որը Մուհիդա «հացթուխին» («խորարարին») էր, ես թույլ տվեցի նրան կիս դառնալ: Պալատից այժմ թագավորը նրան ես վերաբրդեց Ալուսանի «հացթուխին»

(«խոհարարին»): Աճետաձեկիորեն (Հակառակ կողմ)՝ վերադարձու, տուի:
(կճիք)

Էրիմենա Ա[ր ...] (կամ Ռ[ու ...]):

Սեպագիր տեքստում տեղ գտած այս շատ կարևոր փաստը հաստատում է, որ Էրիմենայի հայրը ոչ թե Սարդուրի IV-ն է, այլ մի ուրիշ անձնավորություն, որը արքա չի եղել, և նրա անունը չի հիշատակվել Ուրարտու-Արմենիա պետության արքաների ցուցակում: Փաստորեն Էրիմենայով սկսվել է Ուրարտու-Արմենիա պետության բոլորովին նոր արքայական դինաստիա:

Ի դեպ, նման երևույթ անցյալում էլ տեղի է ունեցել Ուրարտու-Արմենիա պետության արքայական դինաստիայի հետ կապված: Նախորդ շարադրանքից մեզ հայտնի է, որ դա տեղի է ունեցել Ուրարտու-Արմենիայի առաջին թագավոր Արամենից (859-832 թթ.) հետո քաղաքական ասպարեզ եկած Սարդուրի I-ի (832-822 թթ.) հետ կապված, որու իր սեպագիր տեքստերում հիշատակում է, թե իր հայրը ոչ թե Արամեն է, այլ Լյութիարին, որը թագավոր չի եղել: Հետևաբար Սարդուրի առաջինով սկսվում է արքայական նոր դինաստիա:

Փաստերը հաստատում են, որ Ուրարտու-Արմենիա պետության պարբերացման չորրորդ փուլում առաջացած վերոհիշյալ նոր արքայական դինաստիան ունեցել է հայկական ծագում: Այդ փաստերից մենք կապված է Ուրարտու-Արմենիա պետության վերջին երեք թագավորների կամ այդ պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորների հետ, որոնք հիշատակված են ոչ միայն սեպագիր արձանագրություններում, այլև ավանդություններում, այդ թվում Քսենոփոնի «Կյուրոպետիա» աշխատության մեջ տեղ գտած ավանդությունում²⁷: Այդ ավանդական թագավորներն են՝ Արմենը (550-529 թթ.), նրա որդի Տիգրանը (529-522 թթ.) և Արմենի հայրը (585-550 թթ.), որի անունը չի հիշատակվել Քսենոփոնի «Կյուրոպետիայում»: Այստեղ ուշագրավ է այն, որ Արմեն անվան հիմքում ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, որով ընողձվում է, թե այդ անունը կրող Արմեն թագավորն ունեցել է հայկական ծագում: Բնականաբար հայկական ծագում են ունեցել նաև նրա հայրը և նրա որդին: Հավանաբար Քսենոփոնի «Կյուրոպետիայի» մեջ տեղ գտած ավանդությունում հիշատակված Ուրարտու-Արմենիա պետության վերջին երեք թագավորները կամ այդ պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորները նույն պես ունեցել են հայկական ծագում: Թերևս դա է պատճառը, որ որոշ հնչյունափոխությամբ հանդերձ սեպագիր տեքստերում հիշատակված այդ պետության վերջին երեք թագավորները կամ այդ պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորները նույն պես ունեցել են հայկական ծագում: Թերևս դա է պատճառը, որ որոշ հնչյունափոխությամբ հանդերձ սեպագիր տեքստերում հիշատակված այդ պետության վերջին երեք թագավորների կամ այդ պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորները նույն պես ունեցել են հայկական ծագում: Թերևս դա է պատճառը, որ որոշ հնչյունափոխությամբ հանդերձ սեպագիր տեքստերում հիշատակված է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, ինչպես դա նկատվեց Քսենոփոնի «Կյուրոպետիա» աշխատության մեջ տեղ գտած ավանդությունում հիշատակված Արմեն անվան մեջ: Սրանով ընդգծվում է, թե ավանդական Արմենի նման սեպագիր արձանագրությունների Էրիմենան էլ ունեցել է հայկական ծագում:

Փաստերից հաջորդը մտանամշում է, որ «արմ» արմատով կազմված անունն Էրիմինա-

²⁷ Քսենոփոն, Կյուրոպետիա, III, 1, 33:

ից առաջ սեպագիր արձանագրություններում հիշատակված Ուրարտու-Արմենիա պետության արքայական դինաստիայի անդամներին անծանոթ չի եղել: Ինչպես ընդգծվել է նախորդ շարադրանքում, մասն արմատով է կազմվել այդ պետության առաջին թագավոր Արամենի (859-832 թթ.) ամունը, որն ունեցել է հայկական ծագում: Հայկական ծագում է ունեցել նաև Արամեն, որը ստեղծել է հայկական դինաստիա Ուրարտու-Արմենիա պետության դինաստիական կառուցվածքի մեջ²⁸ (Արամենից հետո քաղաքական ասպարեզ եկած Սարդուրի Ի-ը հիմնադրում է արմեններից եթերիկան տարբեր ուրարտների դինաստիա): Այս փաստն իր հերթին հաստատում է, որ Էրիմենան անվան հիմքում հիրավի կարող էր ընկած լինել «արմ» արմատը, որով ընդգծվում է, թե այդ թագավորի անունը ունեցել է հայկական ծագում: Նշված փաստն իր հերթին ընդգծում է, թե ավանդական Արմենի նման սեպագիր արձանագրությունների Էրիմենան էլ ունեցել է հայկական ծագում:

Բնրված փաստերից եղանով կարելի է ասել, որ ոչ միայն Էրիմենան է ունեցել հայկական ծագում, այլև Էրիմենայի որդի Ռուսա III-ը և Վերջինին որդի Ռուսա IV-ը (Վերջին երկուար թեև սեպագիր տեքստերում ավանդաբար կրել են ուրարտական անուններ, բայց ժողովրդական ավանդություններում, որոնք հասել են Քսենոփոնին և Խորենացուն, նրանք կրել են հայկական անուններ):²⁹

Ուրարտու-Արմենիա պետության դինաստիական կառուցվածքի մեջ Սարդուրի IV-ից (635-585 թթ.) հետո դինաստիական փոփոխություն կատարվելու գաղտնիքը պայմանավորված է նրանով, որ, ինչպես ընդգծվեց Վերևում, մ.թ.ա. 585 թվականին Լիդիայի ու Մեղիայի միջև կազմված պայմանագրից հետո, երբ Ուրարտու-Արմենիա պետությունն անցնում է Մեղիայի գերիշխանության տակ, դառնում նրան հարկատու երկիր, հավանաբար նրա գործող դինաստիան, որն ունեցել է ուրարտական ծագում, դեմ է գնացել այդ որոշմանը: Բնականաբար մեղիական պետությունը տապալել է այդ դինաստիան և նրա փոխարեն հաստատել որո դինաստիա, որն անշուշտ ունեցել է ոչ թե ուրարտական, այլ հայկական ծագում, քանի որ սեպագիր փաստերը հաստատում են, որ այդ ժամանակ Ուրարտու-Արմենիա պետության բնակչության մեջ արմենները կամ հայերը խիստ մեծամասնություն էին կազմում ուրարտների համեմատությամբ: Այս վերջինն Էրիմենայի դինաստիայի հայկական ծագումը հաստատող զյուսպիր փաստերից մեկն է:

Այսպիսով, Ուրարտու-Արմենիա պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորները կամ այդ պետության վերջին երեք թագավորները՝ Էրիմենա-Արմենի հայոց (585-550 թթ.), Ռուսա III-«Արմենը» (550-529 թթ.) և Ռուսա IV-«Տիգրանը» (529-522 թթ.), ունեցել են հայկական ծագում և, այդ պետության առաջին թագավոր Արամենից բացի, իրենք էլ ստեղծել են հայկական արքայական դինաստիա Ուրարտու-Արմենիա պետության դինաստիական կառուցվածքի մեջ:

²⁸ Դ. Ն. Սարգսյան, Ուրարտական պետության հայկական ծագման հայդրանքումը ըստ սնպագիր արձանագրությունների և բարձրաբանդակների, Նորը, Երևան, 2003, N 3, լ.ց 174-187:

²⁹ Դ. Ն. Սարգսյան, Խորենացու «Հայոց պատրմության» մեջ հիշատակված ավանդության հայկական պետական կազմավորումը կամ Արմենիա պետությունը ըստ սնպագիր արձանագրությունների, Նոր-դար, 2005, N 1, լ.ց 3-15: